

Հազարամեջ համարատա Զար-
դեպի և Կի ճոռմաա իրրիսի կիս-
իքի բաղ օրաճուր Գրչ.
Եկեղիսի պուրա իջին բեշին 60
Սրբ ալլըզ 35
Սեփիկի բեշին բաշար իջին 85
Սրբ ալլըզ 45
Բօսրա իսճրիսի պիզի ալլոտ տիր.
80 դրոշլուզ բօսրա բաղու՝ 80
դրոշլա գալլուլ օրաճուր
15 կիսիսիս Երախ 60 բր. տըր.

ՄԵԶՄՈՒՄԷՒ

50 րալու

ՄԵՊԱՄԷ

50 րալու

مجموعة اخبار
الاولى قسم جادى ٧٥
DIRECTION
DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBA
Grand'Rue de Pera 65

Հազարամեջ համարատա Զարդեպի և Կի ճոռմաա իրրիսի կիսիքի բաղ օրաճուր Գրչ. Եկեղիսի պուրա իջին բեշին 60 Սրբ ալլըզ 35 Սեփիկի բեշին բաշար իջին 85 Սրբ ալլըզ 45 Բօսրա իսճրիսի պիզի ալլոտ տիր. 80 դրոշլուզ բօսրա բաղու՝ 80 դրոշլա գալլուլ օրաճուր 15 կիսիսիս Երախ 60 բր. տըր.

ՄԵՐ ԳՐՈՂՆԵՐԸ

Երբ մեր Հայ ազգակիցներուն լը-
րագրական կացութեան վրայ հա-
մառօտ ակնարկ մը նետենք, անմի-
ջապէս պիտի տեսնենք թէ անոնք
միայն մայրաքաղաքի մէջ մէկէ ա-
ւելի թերթեր ունին, և այս մասին
չպիտի համարձակինք մեր և անոնց
մէջ նոյն իսկ բաղդատութիւն մը ը-
նել. Եւ յետոյ, զալլով գրողներու,
երբ անոնց ո՛ր և է մէկ թերթը ձեռ-
քերնիս առնենք, անոր մէջ շատ մը
նոր նոր անուններու պիտի հանդի-
պինք, որոնք մէջ մէկ յօդուածներ
կը ստորագրեն և պիտի զգանք թէ
մենք ո՛րչափ ետ մնացած ենք լը-
րագրութեան մէջ. Մայրաքաղաքի
մէջ միայն մէկ հատիկ թերթ մը ու-
նինք. սակայն մի կարծէք թէ ամէ-
նուն կողմէ յեղեղուած բաները ան-
գամ մըն ալ կրկնել կ'ուզեմ, ո՛չ.
Եւրոպայի մասին մէջ ծեծելու գիտա-
ւորութիւն չունիմ և այդէն ի՞նչ օ-
գուտ. այլ սա՛ կ'ուզեմ շեշտել թէ
մենք աշխարհակամ գրող բնաւ չու-
նինք, կամ ունեցածն ու թիւն ալ
ս'յնչափ չնչին է որ չունինքի պէս
բան մըն է. Մի ցուցնէք ինծի Տաշ-
եանը, Մէնշինը, Պալմաքեանը,
Կանը, Երեմեանը կամ ուրիշներ. ա-
սոնք հինէն կը ճանչնանք և ասկէ
զատ ասոնք եկեղեցական դասին կը
պատկանին և մենք եկեղեցական-
ներու մէջ կարող ու նոյն իսկ նը-
շանաւոր գրողներ և գրագէտներ
ունինք, խօսքս անոնց չէ, խօսքս մե-
զի, աշխարհականներուն է. Բայց,
գարձաւ մի՛ ցուցնէք ինծի մէկ
քանի առաջնահայր հեղինակներ, անոնք
թիւ չեն կազմեր. անկեղծաբար խոս-
տովանցէք ինծի հետ թէ մենք աշ-
խարհական գրող կամ գրագէտ չու-
նինք.

Բացէք «Մեծմուսն» քանի՞ պ-
նունի պիտի հանդիպէք հին. թղթա-
տեցէք անոր բոլոր հաւաքածոյները,
առջի թիւէն մինչեւ այսօր, և հազիւ
հազ մէկ, կամ շատ շատ երկու ե-
րեք անուն պիտի գտնէք հոն. Բացէք
Հանդիսմանօրէնայի կամ Բազմալէպը,
նոյն արդիւնքը պիտի ունենաք.

Ի՞նչ է այս անտարբերութեան
պատճառը, ինչո՞ւ մեր եկեղեցական-
ներուն մէջ ա՛յնչափ շատ գրողներ,
գրագէտներ, բանասէրներ ելլան և
մեր աշխարհականներէն ոչ ի՛նչ. Աս-
կէ սա՛ հետեւանք կը ծագի թէ
մեր մէջ միայն եկեղեցականները
նախանձախիդի են մեր գրականու-
թեան, և թէ աշխարհականները, բո-

լորովին անտարբեր են այդ մասին.
Եւ ինչո՞ւ մեր աշխարհականներուն
մէջ գրելու մարմաջը չգտնուի. Ին-
չո՞ւ մեր երիտասարդները չգործեն
գրել, ինչո՞ւ մեր մէջ ալ հրապարա-
կապիւններ յառաջ չգան, ինչո՞ւ վեր-
ջապէս մեր երիտասարդութեան հո-
գիւն մէջ գրելու, արտագրելու, ի՛ր
գաղափարը, իր կարծիքը գրել առ-
նելու ազնիւ ու գեղեցիկ փափագը
գոյութիւն չունենայ. Որովհետեւ, ը-
սենք, մեր գաղափարներուն, վարժարան-
ներուն և ուսումնարաններուն մէջ
գրելու տեղանքը չի՝ ներշնչուի. այդ
բոլոր ինչուններուն այս բացատրու-
թիւնը ասանք, մեր վարժարանները
պատասխանատու բռնենք այս ընդ-
հանուր անտարբերութեան. Թերեւս
ա՛յլ ուրիշ իրականութիւնը սա՛ է
որ այս վիճակը ուրախաբեր ըլլալէ
հեռու՝ ցաւալի և մա՛նաւանդ շատ
ցաւալի է.

Այսօր մայրաքաղաքի մէջ կամ
ուրիշ տեղեր հայերէն լեզուով ա՛յս-
չափ գիրքեր կը տպուին. անոնցմէ
որոնք վրայ Հայ-Կաթողիկէ աշխար-
հականի մը անունին հանդպած էք.

Եւ ահաւասիկ այս բոլորին պատ-
ճառը.

Բնական է թէ ամէն հեղինակ,
գրագէտ կամ գրող, ամէնէն առաջ
գալլոցական եղած է և թէ գալլո-
ցին մէջ պատրաստութիւն ետք միայն
հրապարակ նետուած է. Եւ չմոռ-
նամ հոս չեղտելու սա ճշմարտու-
թիւնը թէ գրելու տեղանքը գըպ-
րոցին մէջ ծնունդ առած է. Եւ ես,
հիմա կրնամ պնդել թէ չեմ տեսած
երբեք Հայ-Կաթողիկէ գալլոցական
պատանի մը որ շարագրութեան փա-
փաք ունենայ, սիրէ գրելը, թուղ-
թեր մտտէ, ոտանաւորներ թխէ, բա-
նաստեղծութիւններ չինէ, հանքեր
գտնելու համար ժամերով մտմտայ,
— որովհետեւ ասոնք են՝ գրող մը
պատրաստութիւն գլխաւոր պայմաննե-
րը և եթէ պրպտէք ամէն գրողի,
գրագէտի կամ բանաստեղծի անց-
եալը, հոն անխուսափելիաբար պիտի
գտնէք այս տղայական նախափոր-
ձերը. Եւ ասկէ զատ անհրաժեշտ է
որ ուսուցիչները սիրցնեն իրենց ա-
շակերտներուն գրելու արուեստը,
մշակեն անոնց մտքին մէջ գրելու
փափաքը, վերջապէս մէկ բառով
պատրաստեն գրողներ որոնք ապա-
գային գրագէտներ, բանաստեղծներ
ըլլալու սահմանուած ըլլան.

Ե. Թ.

ՍԵՔՈՒՍՈՒՈՒԹԻՒՆ

Ալքոլամիութիւնը շատ ծանր հի-
ւանդութիւն մըն է, որ երբեմն նոյն
իսկ անբուժելի կը դառնայ. Ո՛րչափ
մարդիկ տեսած եմ, նոյն իսկ երի-
տասարդներ որոնք անխորհուրդ կեր-
պով ինքզինքնին ալքոլամիութեան
խոր վիրապին մէջ կը ձգեն, ուրկէ
խուսափել դժուար է, եթէ ոչ ան-
հնար.

Ալքոլամիւր, որ կատարեալ յիմար
մըն է, չլային բոլոր գագուռներէ
զուրկ անբանի մը կը նմանի. ուժը
կը սպառէ, ծունկերը կը կորսնան,
ձեռքերը ոտքերը կը դողդողան, լե-
զուն կը թոթովէ, զգացումը կը թըմ-
բի, բերբը կը մեծանի, զգոյա-
րանքները կը կորսնցնեն իրենց կո-
րովը, մանաւանդ տեսողութիւնը կը
նուազի, անձկութիւնը ունեղութիւ-
նը քնազուրկ կ'ընեն զինքը, գիշերը
սենեկին մէջ առանց լապտերի չի
կրնար քնանալ, դժոխային մղձա-
ւանջներ կը հալածեն զայն, հետզ-
հետէ անբուժելի կը դառնայ, լեզուն
կը չորնայ և կ'աղաղակէ, մարսողու-
թիւնը կը դժուարանայ և առաւօտ-
ները հաւկիթի սպիտակուցին նման
նիւթ մը դուրս կուտայ. Եւ բոլոր
ասոնք միայն մահուան սեմէն ան-
դին կը վերջանան.

Անշուշտ պիտի հարցնէք, սիրելի
ընթերցողներ, թէ ի՞նչ է ալքոլ ըս-
ուածը, և ի՞նչ է անոր ֆիւսը.

Ալքոլը, 139գ. դարուն, Առնօ տը
Վիլնէօփ, նշանաւոր քիմիագէտը գը-
տած է. Ալքոլը՝ դիւրալու, չըն-
աւելի թեթեւ, դառն ու կծու հա-
մով, անգոյն, թափանցիկ և հոտա-
ւետ հեղուկ մըն է, որն որ գինիէն
կամ այլ և այլ խմորումներէ յառաջ
կուգայ.

Ալքոլի փնտնելը անհամար են.
մարսողութեան դործարանները, թո-
քերը, ուղեղը և երիկամները կը
կ'աւելն ու կ'ապականեն, յետոյ արեան
մէջ անցնելով արեան քնազակիները
կը խանգարէ և հիւսուածներուն
քայքայման պատճառ կ'ըլլայ.

Ահա այս բոլոր հիւանդութիւն-
ները բռնի իւրացնելէ ետք, ալ-
քոլամիւր՝ ա՛լ անկարող կ'ըլլան իմե-
լու և ուրիշ բան չի մնար ընելիք եթէ
ոչ բժշկներու օգնութեան կարօտիւ
Բայց, ի՞նչ ընեն բժշկները, ո՞ր գոր-
ծարանը չտկեն, քանի որ բոլորն ալ
աւրուած են. Այսու հանդերձ, դարձ-
եալ բժշկները իրենց գիտութեամբ
բըն ու ճարտարութեամբ կարող ե-
ղած են ալքոլին պատճառած հիւան-

դութիւններուն առաջը մասամբ մը
առնել. բայց երկրորդ օրը դժբախ-
տաբար այդ ալքոլամիւրները դարձ-
եալ դիւստոններու մէջ կը տես-
նուին և այս անգամ բժիշկը գեռ-
չհասած, մահն է որ կը փութայ
հասնիլ.

Եւ ստէպ ի՞նչ տարօրինակ ու
քստմեցուցիչ մահեր.

Ալքոլամիութեան տեսլին ախ-
տէն վարակուած մէկու մը մարմնին
վրայ նետեցէք վառուած լուցկի մը
կամ սիկառ մը և պիտի տեսնէք թէ
անմիջապէս պիտի բռնկի ան և վայր-
կեան մը ետքը ձեր առջեւ մարդու
մը տեղ պիտի գտնէք ափ մը փոշի.
Աւելի՛ն — ալքոլամիութիւնը՝
մեծ ու աղէտալի ազդեցութիւն մը
ունի ժառանգականութեան վրայ.
Ալքոլամիւրներ են յաճախ ոճրա-
գործները և եթէ երիտասարդ ոճ-
րագործի մը ծնողքը, նախնիքը պրպ-
տէք, գրեթէ [միշտ ալքոլամիւրներ
պիտի գտնէք հոն.

ՅՈՒՆԻՔ ԳԱՐԱՆՔԻՆԵՆ

ԽԱՐԻՃԻՑԷ

ԱՀԱԼԸ ԶԻՆ

Պիր Թարաֆտան Էնէպլի տեղ-
էնթերի, Չին մէսէլէսինին հալլի ի-
չին նօթալար թանդիմ իթալըքերի
վէ պունլար՝ ազ չօգ հիւսնի գա-
պուլ պուլտուգլարը հալտէ, տիկէր
թարաֆտան մէսէլէի մեղքերէ՝ պու-
լունտղը ետրտէն պիր ատըմ պիլ-
լիէրի կիթմէմէքտէ տիր. Մուխապէ-
րաթը սուրհիսէն պաշլանմադ չէօյլէ
սուրսուն, գապահաթը մեմուրլարն
ազլինէ վէ թէեալպինէ տաիր. Չին
իմէքրաթօրնն նէշը իթտիկէ մը-
նամէլէրին՝ մահպա Էնէպլի տեղ-
էնթերին ալտաթմադ իչին պիր օ-
եուն օլտուղու, վէ էլալթընտան Էն-
նէպլիէրէ գարչը Չինլիլէր թահրիք
իտիծի էմիլէր վէրլիտիկինի տէրայմ
զազէթասընըն Բէքինտէն գուրթու-
լուպ, Եանկայա կիթմիշ օլան մուխ-
պիրի թարաֆտան թէլէկրաֆլա
պիլիթիլիթօր. Թարաֆտան իչպու մուխ-
պիրին մալիւմաթը չիմիտէ գատար
սողուլ չըգմըլ օլմասըլա, մեղքեր
խապէրին տալի սողուլ օլմասը միւհ-
թէմիլ ատտ իտիլիթօր.

Իմէքրաթօր վիլնէլմ. Չին իմէ-
րաթօրնն պիր թէլէկրաֆլա գար-
չըլըզ չէքտիկի թէլէկրաֆլամէտէ,
իւք թէքիթիին չիտաթիին խա-
ֆիթլէթէրէք, գապահաթըլարա վէ-
րիլէնէք ճէզանըն, — գապահաթըլար-
նըն պիւսիւքլիկի տէրէնէսինտէ
օլմադ չարթըլա, — քէնտի (եանի

— Տխրեալ աղչում Բուսիա սէֆիրի՝ Պիւ-
երի ք-տէնէ տէքի սէֆարէթի տանէտէ պիլի
պաւօ վէրիպ, պոռնոտա սիւֆէրա վէ միւ-
թէ պէրանի ֆաւրիլեալալըլյա Բուսիա սէֆ-
րէթի մանէթ վաթօրը զօմանտան վէ զա-
պիթանը հաղըր պոլուսմուշլտր տըր:

—Սեպտ.ին Նինոսէ Պիթլիսէ խայլի դատ
հաղմը տըր :

